

Երազ

Չեմ սիրում ծով գնալ: Երբեք էլ չեմ սիրել և դժվար էլ երբևէ սիրեմ: Եվ, հավատացե՛ք, ես պատճառների պակաս չունեմ ինձ արդարացնելու համար. զարթնում ես, որպես կանոն, գիշերվա այն ժամին, երբ քունդ ամենախորն ու ամենաանուշն է, շտապ հավաքվում ես, հնարավոր է, մի բան հասցնում ես ճանկել ու ուտել երկար ճանապարհից առաջ, այնուհետև բեռները քարշ ես տալիս բակ՝ տաքսու մոտ, որոնք շուտով դատարկում ես օդանավակայանում ու կրկին քարշ տալիս դեպի գրանցման մարդախիտ հերթը, ոտքի վրա սպասում, մինչև քո հերթը հասնի, և արդեն առանց մեկ-երկու ճամպրուկի մնացած բեռները շարունակում ես կրել դեպի ստուգման հաջորդ կետ, որտեղ պետք է դատարկես գրպաններդ, հանես գոտիդ ու համակարգիչդ ու հետ դասավորվելուց հետո նոր միայն կհասնես օդանավի նստեցման հերթին: Վերջապես, ժամուկես տևող այս տանջալի ձևականություններից հետո հասնում ես օդանավի նստարանիդ ու բեռները մի կերպ դարակներում խցկելուց հետո վեր ընկնում նստարանիդ, որին պետք է գտնվես առաջիկա ժամերին: Շուտով զգում ես քնկոտությունդ ու փորձում ես ննջել այդ ուղղաձիգ անհարմար աթոռին, և օգնության է հասնում ուտելիքի համար նախատեսված բացովի սեղանիկը, որին գլուխդ հակելով միայն մի կերպ կարողանում ես անջատվել: Սակայն շատ չանցած լսում ես ինքնաթիռն սպասարկող աշխատակիցների՝ ուտելիք առաջարկող և գնալով քեզ մոտեցող ձայնը, զարթնում քնիցդ, ներս անում հրամցվածը և կրկին փորձում ես քեզ զցել Հիպնոսի գիրկը: Ժամանելուց հետո պետք է ճիգ գործադրես և ճարպկություն ցուցաբերես՝ օդանավից դուրս եկողների պան մեջ արժանի տեղ զբաղեցնելու համար, և հերթական անձնագրային ձևականություններն անցնելուց հետո պետք է փնտրես մեքենան, որը քեզ պիտի հասցնի հյուրանոց: Հյուրանոց հասնելուց հետո պարզում ես, որ քո սենյակը դեռ պատրաստ չէ և պետք է սպասես ևս մի քանի ժամ, ու շարքային ձևական փաստաթղթեր ստորագրելուց հետո ձեռնամուխ ես լինում ժամանակ սպանելու արարողությանը, այն, ինչը քեզ մոտ ստացվում է անել վերին աստիճանի վարպետությամբ՝ շատ անգամ նմանատիպ ճամփորդություններ անելուց հետո: Երբ տալիս են սենյակիդ բանալին ու վերջապես տեղավորվում ես, սկսվում է քո այդտեղի կյանքի միապաղաղ ցիկլը. ամեն առավոտ՝ զարթնելուց հետո, գնում ես ճաշարան, որտեղ գլխապտույտ քանակով տեսակ-տեսակ ու խայտաբղետ ուտելիքների միջից միայն մի քանիսի համերն են արդարացնում իրենց արտաքին տեսքը, որոնք համտեսելուց և նրանց մասին քո ենթադրությունները ստուգելուց հետո գնում ես ծով, մարմնիդ վրա դատարկում արևից պաշտպանող քսուքները ու մինչև կեսօր անգործ նստում ծածկի տակ՝ կիսաավազոտ աթոռին՝ խոնավ տոթի մթնոլորտում, ենթարկվելով զանազան թռչող միջատների անխնա հարձակումներին, ամբողջ ընթացքում երկու-երեք անգամ ջուրը մտնելով և քեզ խաղերի հրավիրող աշխատակիցներին մերժումներ բաժանելով: Երբ արևն արդեն հասնում է զենիթին՝ կիսատ-պռատ մաքրում ես վրայիդ ավազն ու հայդա տուն՝ ցնցուղ ընդունելու: Ճաշարանում կրկին տասնյակ գրավիչ արտաքինով ուտելիքներից ընտրում ես լոգարիթմական քանակությամբ հավանաբար համեղները ու ճաշելուց հետո վերադառնում ես սենյակ՝ Հիպնոսի գիրկը: Զարթնում ես հեռախոսի զանգից, որը քեզ կրկին կանչում է ծով ևս երկու ժամ սպանելու, որին պետք է հետևեն սենյակում ցնցուղն ու ճաշարանում ընթրիքը: Այդ ամենից հետո գնում ես հյուրանոցի կազմակերպած շունն դիտելու կամ էլ թե, ավելի վատ, հյուրանոցից դուրս՝ փողոցը չափելու ու զանազան անպետք ապրանքներ գնելու: Օրվա վերջում զմիում ես մահիճիդ ու փորձում շտապ քնել, որովհետև հաջորդ օրը, ինչպես մի անգամ ասել է իմ դասարանցի Վահանը (այլ թեմայով)՝ repeat all programs: Ահա թե ինչ են նկատի ունենում մարդիկ հանգիստ ասելով: Ո՞վ կարող է ինձ բացատրել, թե ինչ հաճելի բան կարող է լինել այս «հանգստի» մեջ:

Սակայն այս ամենն այնքան ձանձրալի ու չարչարող չէ, կա ավելի, շատ ավելի անտանելի ու սաստիկ տանջանք...

2022 թվականի օգոստոսի 13-ի առավոտյան վեցին վառվեց մեր տան հյուրասենյակի լույսը, որտեղ ես քնած էի հոգնեցուցիչ օրվանից հետո: Քնած էի այնտեղ իմ սենյակի անտանելի տոթի պատճառով: Մեր նոր տունը, ուր տեղափոխվել էինք ոչ ավել, քան տասը ամիս առաջ, գտնվում էր Կոմիտաս և Վաղարշյան փողոցների խաչմերուկում, իսկ շենքի վերին հատվածում առանձնանում էր մի մեծ ժամացույց: Շենքի՝ խաչմերուկին նայող անկյունը սուր էր մինչև յոթերորդ հարկ, որից վեր այն կտրված էր այդ երկնիստ անկյան կիսորդին ուղղահայաց: Հենց այդ սուր ծայրին էլ գտնվում էր մեր տունը, ավելի ճիշտ՝ ծնողներիս սենյակը, իսկ նրա հարևանությամբ Կոմիտասին էր նայում իմ սենյակը, որը միշտ լցված էր անտանելի գաղջ ու ծանր օդով, որն էլ ավելի էր ծանրանում պատուհանը բացելու փորձից հետո, զի ճիշտ սենյակի քթի տակ մշտապես ծանրաբեռնված Կոմիտասի մեքենաների ծուխը չէր կարող թթնացնել այն: Եվ այժմ ես փրկությունս էի գտել հյուրասենյակում, որտեղ օդորակիչի անդուլ աշխատանքը տրամադրում էր անհամեմատ ավելի մարդկային պայմաններ հանգիստ ննջելու համար՝ զիջերը մի քանի անգամ տոթից կիսահալ զարթնելու փոխարեն:

Մակայն այդ առավոտ ինձ վիճակված չէր քունս առնել: Չէ՞ որ պետք էր չուշանալ ինքնաթիռից, որի թռիչքը նշանակված էր ութն անց կես: Մենք շտապով հավաքվեցինք ու շուտով դուրս նետվեցինք բեռները գլորելով. տաքսին ժամանել էր:

Մենք միշտ ընտանիքով հանգստի գնալու ժամանակ կանչում էինք երկու տաքսի, որպեսզի կարողանանք տեղավորել մեզ ու մեր իրերը, սակայն այս անգամ բավական էր և մեկը, ճիշտ է, սովորականից փոքր-ինչ մեծ, բայց և այնպես մի մեքենան: Պատճառն այն էր, որ այս անգամ բացակայում էր քույրս՝ Անին, ով չէր կարող մեզ միանալ, քանզի պետք է ամսի 17-ին և 18-ին ներկայանար Ամերիկյան համալսարան՝ ինչ-որ իրադարձության մասնակցելու համար: Երբ ես իմացել էի այդ մասին, իմ մեջ նախանձ էր զարթնել նրա նկատմամբ. ինչու՞ պետք է նա վայելեր իր ազատ մեկ շաբաթը, իսկ ես մասնակցեի ինձ համար խիստ անցանկալի այդ ճանապարհորդությանը: Այդ ի՞նչ միջոցառման պատճառով պետք է նա անմասն մնար ինձ բաժին հասնելիք պատժից: Այնուամենայնիվ պետք է նշել, որ նա չէր ուզում բաց թողնել հանգիստը, որը շատ լավ էլ ցանկալի էր իր համար: Բայց և այնպես փաստացիորեն ողջ տունը մեկ շաբաթով մնում էր նրա տնօրինությանը և նա լիովին ազատ էր:

Օդանավակայան հասնելուց հետո մենք հանդիպեցինք մորաքրոջս՝ Թագուհուն ու նրա ամուսնուն՝ Ռուստամին: Նրանց հետ էին նաև իմ Հովիվ քեռին և նրա որդի Հարությունը, ովքեր մեզ ճանապարհելուց հետո վերադարձան տուն: Շտապով գումար մանրելու գործը վերջացնելուց հետո պարզեցինք, որ ուշացել ենք գրանցումից, բայց և այնպես, իհարկե, մեզ թույլ տվեցին գրանցվել: Միայն թե մեզ տվեցին իրարից շատ շատ հեռու նստատեղերով տոմսեր: Մյուս ստուգման կետերն էլ անցնելուց հետո վերջապես հասանք ինքնաթիռին և շաղ եկանք նրա երկայնքով մեկ: Ես բեռներս տեղավորեցի վերի դարակներում և զբաղեցրի երրորդ շարքի F նստատեղը:

Այդ թռիչքը շատ հեռու էր իմ կյանքի ամենալավ թռիչքը լինելուց: Ծանր էր իմ կացությունը, երբ մի երեխա ետևիցս քացի էր տալիս նստարանիս, իսկ իմ շարքում նստած մեկ ուրիշը չէր կարողանում դադարել կոկորդը պատռելով լաց լինելը:

Թռիչքն սկսելուց քիչ անց ես արդեն գլուխս տեղավորել էի ուտելիքի բացովի սեղանիկին և ջանք էի գործադրում՝ ննջելու համար այդ հալածված վիճակում: Մեկ ժամ անց նկատեցի մոտեցող ուտելիքի սայլը և բարձրացրի գլուխս: Բաժինս ստանալուց տասը րոպե անց նրանից այլևս ոչինչ

չէր մնացել, և ես սկսեցի գննել տեղանքը, որի վրայով թռչում էինք: Այն ամբողջությամբ անապատ էր՝ խորդուբորդ ռելիեֆով ու բազում բլուրներով: Մակայն իմ ուշադրությունն ավելի շատ գրավեց մեկ այլ բան. այդ անապատի միջով գալարվում էր բավականին լայն մի լազուր գետ: Ես սկսեցի վերհիշել նախորդ տարվա իմ անգիր արած աշխարհի քարտեզի՝ այդ տեղանքի երկրները, բայց նույնիսկ հիշողությունս լարելուց հետո Սիրիայից, Լիբանանից, Իսրայելից ու Իրաքից բացի այլ երկրներ չկարողացա հիշել: Ես ենթադրեցի, որ մենք թռչում ենք Իրանի կամ Սիրայի տարածքով՝ Դեր Զորի անապատի վրայով, իսկ այդ փարթամ գետը Տիգրիսն է կամ էլ թե Եփրատը, որովհետև Միջագետքով հոսող այլ մեծ գետ չէի մտաբերում:

Շուտով քունը վրա տվեց ինձ և ես կրկին գլուխս հակեցի: Ձարթնեցի միայն աշխատակցի ձայնից, ով ինձ հորդորում էր փակել սեղանիկը, զի ինքնաթիռը պատրաստվում էր վայրէջքի:

Երբ վերջապես օդանավը կանգ առավ Հուռզադայի օդանավակայանում, ուղևորները խմբվեցին օդանավի միջանցքում և շուտով սկսեցին դուրս հոսել մեկը մյուսի ետևից: Անհարմար էր իմ վիճակը. իմ բեռները տեղավորված էին ինձանից մի նստարան ետ, իսկ այնտեղ հասնելու համար ինձ անհրաժեշտ էր գնալ մարդկանց հոսանքին հակառակ: Մի քանի բուպե անգործ սպասելուց հետո ես վերջապես հաջողեցի մարդկանց միջև բացված փոքրիկ տարածքով հասնել իմ իրերին, ճանկել դրանք ու հոսանքի հետ դուրս հորդալ ինքնաթիռից:

Դրում մեզ սպասում էին երկու-երեք ավտոբուսներ, որոնք մեզ պետք է հասցնեին համապատասխան շինությանը: Այնտեղ հասնելուց հետո մենք երկու սրիկայի հորդորով ամեն մարդու համար 25 դոլարի փոխարեն 28-ով վիզա գնելուց հետո առաջացանք անձնագրի ստուգման կետի մոտ, իսկ մի քանի բուպե անց արդեն ավտոբուսի մեջ էինք:

Մեծ էր իմ զարմանքը, երբ այդ ավտոբուսը մեզ իջեցրեց Steigenberger Aqua Magic հյուրանոցի մոտ. չէ՞ որ մենք հենց այդտեղ էինք եղել նախորդ տարի, իսկ այս անգամ տանեցիներից ոչ ոքից չէի լսել այդ հյուրանոցի անունը և կարծում էի, որ հանգրվանելու ենք Albatros կոչվող հյուրանոցում, որի անունը հաճախ էր շոշափվել մեր տանը՝ նախորդ մեկ շաբաթվա ընթացքում: Մակայն ես չարտահայտեցի միամիտ զարմանքս:

Steigenberger-ը գերմանական հյուրանոցների գույգ էր, որոնցից մեկում մենք պետք է հանգրվանեինք: Մյուսը կոչվում էր Steigenberger Al Dau և գտնվում էր մեր հյուրանոցից դեպի ծով ճանապարհին: Որոշ անհեթեթ դետալների պատճառով Al Dau-ն զգալիորեն թանկ էր Aqua Magic-ից, որտեղ, իհարկե, դեր էր խաղում նաև ծովից հեռավորությունը և գեղեցիկ այգիների առկայությունը: Մակայն այդ հյուրանոցի լողավազանն իր ողջ ցանցով և զվարճանքի հնարավորություններով չէր կարող համեմատվել մեր հյուրանոցի ավազանի հետ. այնտեղի տաք ու բլթբլթացող ջակուզին գրեթե ոչինչ էր այստեղի մի քանի մեծ ավազանների, որոնք միացված էին բարակ ջրանցքներով, ինչպես նաև մի քանի սահարանների և ավազանի մեջ գտնվող մանկական խաղահրապարակի դիմաց:

Հյուրանոցի աշխատակիցների ճնշող մեծամասնությունը կազմում էին արաբ տղամարդիկ, հատկապես հավաքարարների մեջ հնարավոր չէր գտնել կին աշխատողի: Այդ հյուրանոցը հատկանշական էր նաև նրանով, որ չնայած հսկայական չափերին ու բազում մասնաշենքերին առկա էին միայն տասը wi-fi սարքեր, որի պատճառով համացանցը գործնականորեն բացակայում էր:¹

¹ Այս մասին իմացանք Ռուստամի շնորհիվ, ով աշխատում էր համացանցի հետ և լավատեղյակ էր նրա հետ կապված ցածր մակարդակի սարքերից

Ավտորուսից մեր բեռներով դուրս թափվելուց հետո մուտք գործեցինք արդեն իսկ ինձ լավ ծանոթ շենքը: Առաջին բանը, որին ես ուշադրություն դարձրի, առաստաղից կախված բազմաթիվ քսանանիստ ջահերն էին, որոնք ես հիշում էի դեռ նախորդ տարվա այցից: Սրահի մեջտեղում քառակուսաձև անցք կար կտրված, որի բազրիքներից կախվելով կարելի էր տեսնել ճաշարանի մուտքը: Աջ կողմում ընդունարանն էր և մի բար, ձախ կողմում ճաշարան իջնող ճանապարհն էր, իսկ դիմացում տարածվում էին բյուր բազմոցներ ու բազկաթոռներ:

Մի քանի փաստաթուղթ ստորագրելուց հետո մենք տեղ զբաղեցրինք այդ բազմոցներին և տրամադրվեցինք առնվազն երկու ժամ սպասելուն, մինչև մեզ սենյակներ կհատկացնեին:

Նախաճաշից ուշացել էինք, և սովը մեզ ստիպեց փնտրել այլ ճաշելու վայր: Պարզեցինք, որ լողավազանի սահարանների դիմաց կա մի ճաշարան, որը երեկոյան վերածվում է իտալական ռեստորանի: Մենք դիմեցինք այնտեղ և տեղավորվեցինք: Բնականաբար այդ ճաշարանն իր ուտեստային ռեսուրսներով չէր կարող համեմատվել հիմնական ճաշարանի հետ, բայց և այնպես մենք ուրախ էինք, որ գոնե մեր քաղցն ինչ-որ չափով հագեցրինք:

Վերադարձանք ընդունարանի բազմոցներին, որտեղ հայտնի դարձավ, որ պատրաստ են երեք սենյակից երկուսը՝ բացի իմ և Մանեի սենյակից: Նախ ծնողներիս, ապա Թագուհու և Ռուստամի սենյակը ստիպված եղանք փոխել՝ անվայել լինելու պատճառաբանությամբ: Վերջ ի վերջո ստանալով նաև իմ ու Մանեի սենյակի բանալիները մենք դիմեցինք այնտեղ ու տեղավորվեցինք:

Հատկանշական էր բաղնիքի հայելին: Այն կազմված էր երկու հայելիներից, որոնք միացված էին ուղիղ անկյան տակ՝ երկու պատերի հատման գծով: Եթե հայացքդ չընկներ այդ երկու էջերից և ոչ մեկին, ապա միևնույն է, կկարողանայիր քեզ տեսնել՝ նայելով նրանց անկյանը՝ պատերի հատման գծին: Միայն թե ամեն էջի եզրերը փոքր ինչ խավարամած էին և պատկերի մի ուղղաձիգ շերտը մի քիչ աղավաղված կերևար:

Երբ բոլորը պատրաստ էին, մենք այցելեցինք ճաշարան՝ ճաշի: Մեծ էր այն ու աղմկոտ: Խառնամբոխ ժողովուրդը վազվզում էր այս ու այն կողմ՝ ափսեները համապատասխան ուտելիքի համար պատասխանատու խոհարարին մոտեցնելու համար, որպեսզի նա դնի ցանկալի խորտիկը տիրոջ ափսեի մեջ: Ուտեստները բազում էին ու բազմապիսի: Այդ գույնզգույն ու խառնիճաղանջ կերակրատեսակներն առաջին հայացքից ախորժելի էին թվում, սակայն բավական էր ընդամենը մի անգամ համտեսել դրանցից յուրաքանչյուրը և երեքից երկուսը դուրս կթռչեին ընտրությունից (առնվազն ինձ համար, չնայած որ ժամանակի հետ ընտելացա որոշ ուտեստների):

Ես, ինչպես որ կաներ իմ տարիքի յուրաքանչյուր երիտասարդ կամ պատանի, ուշադրություն դարձրեցի առաջին հերթին այնտեղի գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին: Հյուրանոցի գերմանական լինելու պատճառով հանգստացողների ճնշող մեծամասնությունը կազմում էին հենց գերմանացիները: Բհարկե, շատ կային կրակոտ կանայք ու աղջիկներ, սակայն ես չկենտրոնացա նրանցից որևէ մեկի վրա, այլ գլուխս կախ հավաքեցի իմ ուտելիքը և անխռով կերպով սկսեցի մաքրել ափսես:

Վերջացնելուց հետո մենք վերադարձանք սենյակներ, պատրաստվեցինք ու գնացինք ծով՝ առաջին անգամ: Ես հիշում էի այդ ծանծաղ ափը նախորդ տարվանից, որտեղ ծովի հատակին մի քանի մետրը մեկ հանդիպում էին ջրիմուռների կույտեր, որոնց չարժեր դիպչել, զի կարող էին պատռել ոտքը: Մակայն այնքան էլ հեշտ չէր լողալ՝ խուսանավելով բոլոր այդ ստորջրյա բույսերից, որովհետև դրանք կարող էին հանդիպել չափից դուրս ծանծաղ վայրերում և մարդ ուղղակի չէր հասցնի փոխել ուղղությունը ու կմխվեր դրանց մեջ: Դա էլ բավական չէր, մեր

Ժամանելուց մեկ ամիս առաջ Հուռգադայի մեկ այլ ավուում տեղի էր ունեցել շնածկների հարձակում մարդկանց վրա և կար երկու գոն:

Ես՝ մտաբերելով նախորդ տարվա՝ այդ ավիին լողալու դժվարությունները շատ չմնացի ջրի մեջ և նույնիսկ ջուրը մտա միայն երկու անգամ: Մերթ ընդ մերթ միանում էի ընկերակիցներիս գրույցներին, իսկ մնացած ժամանակ ընթերցում էի Ջեյ Լոնդոնի «Джери островитянин» վեպը՝ ռուսերենով: Ես որոշել էի, որ դա ինձ կօգնի գոնե ինչ-որ չափով բացել լեզուս, վերջ է վերջո ես սովորում էի Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի չորրորդ կուրսում, հավանաբար արդեն ժամանակն էր գոնե երկու տառ իրար կապել կարողանալու:

Երկու-երեք ժամ անց մենք ետ եկանք սենյակներ, լոգանք ընդունեցինք և վերստին այցելեցինք ճաշարան՝ այդ օրը վերջին անգամ՝ ընթերելու: Գլխավոր մասնաշենք մուտք գործելուց հետո մենք ակնատես եղանք ընդունարանի դիմաց խմբված մարդկանց մեծ բազմության, ովքեր ժամանում, կամ էլ թե մեկնում էին: Ես դա չճշտեցի և դա կարևոր էլ չէր: Կարևոր էր այլ բան. թաչփաղ էկրանով մի վահանակի մոտ կանգնած էին երկու երիտասարդ աղջիկներ: Նրանցից մեկը նիհար էր ու բարեկամ, իսկ մյուսը փոքր-ինչ հաստիկ էր: Համենայն դեպս ես մեծ վստահությամբ կարող եմ ասել, որ Արսենը երկրորդ աղջկան կդասակարգեր որպես «դախ», թող ների ինձ այդ աղջիկը, իսկ եթե դա այդպես չէ, ապա Արսենը նույնպես: Կարելի էր կարծել, որ նրանք քույրեր են, բայց այդ վարկածը կասկածելի էր՝ նրանց արտաքին տվյալների մի շարք հակասությունների պատճառով: Չնայած որ երկուսն էլ դեմքով գեղեցիկ էին, նիհարն աննկարագրելիորեն ավելի վայելչակամ էր, ինչն ընդգծվում էր հատկապես նրա հագուկապի՝ վարդագույն տոպիկի և ջինսե շորտերի շնորհիվ, իսկ թեթևակի շպարած աչքերի ցուլը առանձնահատուկ ազդեցություն էր գործում նրա արտաքինի վրա:

Ես ֆիքսեցի այդ երիտասարդ օրիորդին ու անցա առաջ, զի ընտանիքիս հետ էի, և մենք ցած իջնելուց հետո կանգնեցինք ճաշարան մտնելու հերթի մեջ: Պահ մի անց ես գլուխս թեքեցի ու տեսա, թե ինչպես ցած իջան այն գեղակամ օրիորդն ու իր ընկերակցուհին, և նա առավել ուժեղ տպավորություն գործեց ինձ վրա:

Ես հիշեցի, թե ինչպես դրանից երեք տարի առաջ, երբ գտնվում էինք Հունաստանի Հռոդոս կղզում, իմ ուշադրությունն էր գրավել մեկ այլ երիտասարդ օրիորդ: Նա, չնայած, շատ էր տարբերվում այս մեկից. նա բարձրահասակ չէր, քայլում էր փոքր-ինչ կուզիկորեն, ուներ կարճ ժանգագույն մազեր, կրում էր միշտ նույն սպիտակ շապիկը, ջինսե շորտերը և սպիտակ բարձր բոթասները: Նա կազմվածքով և գեղեցկությամբ զիջում էր շատերին, բայց նրա մեջ կար ինչ-որ յուրահատկություն, ինչ-որ աննկարագրելի բան, որը բացակայում էր մյուս բոլորի մոտ:

Ամեն օր ճաշարան գնալիս ես նրան էի փնտրում այդ ամբոխի մեջ և ընտրում այնպիսի աթոռ, որպեսզի նա երևա ինձ: Մի օր, երբ մենք այցելել էինք տեղի մեքսիկական ռեստորանը, դա դիպվածով համընկել էր նրա ընտանիքի այցի հետ: Եվ իմ ու նրա դիրքերն այնքան հարմար էին, որ ես կարողանում էի 4-5 մետր հեռավորությունից ըմբռնել նրա տեսարանը, ենթադրաբար գրեթե աննկատ մնալով: Մեկ այլ օր, երբ մենք մեկնել էինք կղզում զբոսնելու, ես շատ ծանր էի տարել նրան տեսնել չկարողանալու: Ամեն օր ես փնտրում էի նրան ծովափին, քանի քանի անգամ չափել էի ես ավր իր ողջ լայնքով ու երկայնքով, սակայն չէի գտել նրա ընտանիքի և ոչ մի անդամի: Ծովում լողալիս, երբ հեռանում էի ավից, մեջքի լող էի տալիս, որպեսզի հայացքով որոնեմ նրան ավիին շող եկած մարմինների մեջ, իսկ ավիին մոտենալիս՝ ընդհակառակը, լողում էի փորիս վրա՝ նույն պատճառով: Մի անգամ նկատել էի, որ նա գնացել էր մարզահրապարակի կողմը և, միգուցե սխալմամբ, ենթադրել էի, որ նրանց սենյակը մոտերքում է ու այդ պատճառով հաճախ գնում էի այնտեղ և ձևականորեն մարզվում՝ սպասելով նրան: Մակայն իմ բոլոր փնտրտուքները զուր էին: Ես այդպես էլ չգտա նրա սենյակը, և ոչ էլ կարողացա մոտենալ նրան: Ես չիմացա ոչ նրա անունը

և ոչ էլ նույնիսկ ազգությունը: Այնտեղից հեռանալուց հետո ես շատ ծանր տարա նրանից բաժանումը: Բայց չէ՞ որ դա պետք է մի օր տեղի ունենար: Ես գիտակցում էի դա ու հոգիս ավելի էր ճնշվում այդ անելանելիության զգացումից:

Ես վերհիշեցի այս ամենն ու գիտակցեցի, որ շուտով տեղի է ունենալու նույն պատմությունը, ուղղակի շաբլոնային պարամետրերի՝ մասնավորապես երիտասարդ օրիորդների փոփոխությամբ: Եվ թախիծ իջավ ինձ վրա, սակայն ես չէի կարող ոչինչ անել: Ինչու՞ այդքան գեղեցիկ օրիորդը միայնակ է, նրա հետ չկա ոչ ընկեր, ոչ ամուսին: Ախր եթե նրան ընկերակցեր ինչ-որ կավալեր, ես թույլ չէի տա ինձ այդքան նայել նրա կողմը: Ոչ այն պատճառով, որ ես կվախենայի նրա ընկերակցից, այլ որովհետև կգիտակցեի, որ նա պատկանում է ուրիշին և զուր գլուխս մեղքի տակ չէի դնի: Սակայն այս գեղեցկուհու կողքին չկար տղամարդ, բացառությամբ, իհարկե, նրա (ենթադրաբար) հորից, և ես ակամայից սկսեցի օդային ամրոցներ կառուցել²:

Ճաշարանում ուտելիք հավաքելիս բազմիցս փնտրեցի նրան, սակայն ապարդյուն: Մեղանի շուրջ իմ տեղը գրավելուց հետո էլ շարունակեցի որոնումներս և հանկարծ, ո՞վ հրաշք, ինձանից մոտ երեսուն մետր անկյունագծով ձախ ծիկրակեց նրա ոսկեծամ գլուխը, միայն թե նա նստած էր ներսի սրահում, իսկ ես դրսի: Ներսի սրահի լուսավորության շնորհիվ պատ-ապակու ետևից շատ ճշգրիտ էր երևում նրա դեմքը և քանզի մեր հայացքներն ուղղված էին գրեթե միմյանց կողմ, ես ուտելիքիս փոխարեն սկսեցի աչքերով լսփել նրա արքայազուն գեղեցկությունը: Սակայն նայում էի ընդհատ, զգուշանալով, բնավորությանս համաձայն չէի ուզում նկատվել նրա կողմից:

Ճաշարանից հետո բոլորովս դիմեցինք դեպի այն վայրը, որտեղ այդժամ համերգ էր և շուտով պետք է շոու տեղի ունենար: Մենք տեղավորվեցինք բեմին բավական մոտ, սակայն նստեցինք թեքությամբ, և ես սեղանների շուրջ խտացած մարդկանց դեմքերի միջից ճանաչեցի այն օրիորդին: Ես մերթ ընդ մերթ թեքվում և ըմբռնում էի նրա հայացքը՝ չնայած հեռու լինելուն: Շուտով երեխաները հավաքվեցին պարահրապարակում պարելու և նրանց միացան որոշ երիտասարդներ նույնպես, որոնց թվին նա էլ էր պատկանում: Ես մոտ էի բեմին ու ինձ բավական լավ էր երևում նրա բարեկամ մարմինը, և ես ազահորեն հետևում էի նրա կոնքերով պարին: Այս ամենը ինձ հիշեցրեց «Մալիբույի փրկարարները» (Baywatch, 2017) ֆիլմի այն դրվագը, որում Միտչը մոտենում է Սամմերին հեռադիտակով հետևող Մեթին և առաջարկում մոլագարի (մանյակի) պես այդ աղջկան հետևելու փոխարեն մոտենալ և տղամարդավարի խոսել նրա հետ:

Սակայն շուտով տանեցիներս հավաքվեցին և ես չէի կարող չգնալ նրանց հետ, ինչպե՞ս Մանեին կարելի էր տանը միայնակ թողնել: Ես զրկվեցի օրիորդի հաճելի ներկայությունը վայելելու հաճույքից ու ստիպված դիմեցի սենյակ:

Ընդունարանի կողքով անցնելիս ես ուշադրություն դարձրի այն վահանակին, որի մոտ առաջին անգամ նկատել էի գեղեցկուհուն: Դա, երևում էր, ընթրիքը հյուրանոցի տարածքի այլ ռեստորանում անցկացնելու նպատակով գրանցումների համար էր: Փաստորեն, նա պատրաստվում էր առաջիկա ընթրիքի վայրը տեղափոխել:

Սենյակ հասնելուց հետո իմ գիտական ղեկավարի հանձնարարած «Combinatorial convexity» գրքի չլուծած խնդիրների վրա փոքր ինչ խորհեցի, իսկ այնուհետև մտածեցի նրա մասին: Որոշ ժամանակ անց ինձ վրա իջավ թմրությունն ու ես ննջեցի:

² Ինչպես Դյուման նկարագրել է պատանու զգացումները իր «Ասկանիո» վեպում

Հաջորդ՝ երկրորդ օրվա առավոտյան ճաշարանում ես փորձեցի գտնել նրան, սակայն հաջողություն չունեցա: Ծովում նույնպես ես չգտա նրան, չնայած որ տեղը տեղին չէի էլ փնտրել: Փոխարենը ես առաջ գնացի «Կղզեբնակ Ջերին» գրքի ընթերցանության մեջ: Կեսօրին վերադարձանք ու լոգանք ընդունեցինք, որին հետևեց ճաշարանը: Սակայն ես դատապարտված էի ապարդյուն փնտրտուքների, և սենյակ վերադառնալուց հետո զբաղվեցի չլուծածս խնդիրներով: Փոքր ինչ քնելուց և հանգիստ առնելուց հետո կրկնեցինք դեպի ծով մեր այցը: Գեղատեսիլ օրիորդի բացակայության մթնոլորտում ամենը կրկին միապաղաղ ու անհետաքրքիր էր ինձ համար:

Ասենք, զարմանալի էլ չէր նրա՝ ծովում չգտնվելը (եթե, իհարկե, նա իրոք այնտեղ չէր): Ծով գնում էին քչերը, կամ էլ թե կարճ ժամանակով: Հյուրանոցի բնակիչների գերակշիռ մեծամասնությունը ողջ օրը ճապաղված էր ավազանային ցանցի սահմաններին, դժվարանում եմ ասել, թե ինչու: Բայց փաստը մնում էր փաստ, որ որևէ մարդու՝ ծովում բռնացնելու հավանականությունը բավականին փոքր էր:

Երեկոյան՝ ընթրիքի ժամանակ, ես շատ չհասցրի էլ մտածեմ նրա մասին, երբ մտաբերեցի նախորդ օրը նկատածս ռեստորաններում գրանցվելու վահանակը ու հասկացա, որ այդ օրը նրան այլևս չեմ գտնի ճաշարանում:

Այստեղից մենք քայլեցինք դեպի համերգի վայրը: Նոր էինք հասցրել մուտք գործել այդ տարածք, երբ հեռվում աչքս ծակեցին երկու երիտասարդ աղջիկներ: Դրանցից մեկը նա էր՝ սպիտակ ծաղիկներով պատված կանաչ դերիայով և նարնջա-շագանակագույն ապակիով թիթեռ-ակնոցով, իսկ մյուսը՝ նրա մշտական ընկերակցուհին էր, ում ռիսկի կոդիմեմ այսուհետև որպես նրա քույրը հղվելով: Ես տեսա, թե ինչպես նրանք մանկան հրճվանքով ձեռք ձեռքի տված այս ու այն կողմ էին ցատկոտում ու վազվզում՝ ինձ համար անհայտ պատճառով:

Մի պահ նա հայացքը դարձրեց իմ կողմը, և ինձ թվաց, հնարավոր է սխալմամբ, որ նա ինձ նկատեց: Ինձ պարուրեց մի տարօրինակ զգացում. ես չգիտեի, դա դիտմամբ՝ ր նետված հայացք էր, թե՞ պատահական շարքային: Նկատե՞լ էր արդյոք, թե ինչպես եմ անդադար նրան փնտրում, թե՞ դեռևս ուշադրություն չէր դարձրել ինձ վրա:

Ինչպես նախորդ օրը՝ այսօր ևս, երգ ու պարի ժամանակ նա ու իր քույրն իրենց տեղը գրավեցին պարահրապարակում և սկսեցին աշխուժորեն շարժել իրենց ձեռքերն ու կոնքերը: Ես ըմբռնվեցի էի այդ տեսարանը քանի կարող էի:

Շուտով պարողները ցրվեցին և սկսվեց շուն: Ճիշտ է, ինձ համար այն իր դիտարժանությամբ չէր կարող չափվել ոսկեծամ գեղեցկուհուն դիտելու հաճույքի հետ, բայց դե, միևնույն է, այն էլի նայվում էր: Կանաչագգեստ գեղուհուն ես տեսա իր ընկերակցուհու հետ՝ «Souk bar» գրությամբ բարի դիմաց հերթ կանգնած: Նրա տեսարանով բավականանալուց հետո ես տեսա, թե ինչպես նա գրավեց իր տեղը ընտանիքի մոտ: Նա նստած էր բավականին ետ, զի մենք բեմի քթի տակ էինք, ինչի պատճառով դժվար էր նրա կողմն անընդհատ թեքվելը, և քնելու դիմող ավանգարդի հետ ես էլ խառնվեցի ու շուտով հերթական ըմբոստ խնդիրը խեղդամահ անելով, որի վրա կենտրոնանալը, ի դեպ, այնքան էլ հեշտ չէր աղջնակի ճառագայթած տպավորությունից հետո, ես թեքվեցի բարձիս ու ճանապարհեցի Հուռգաղայում գտնվելու մեր երկրորդ օրը:

Երրորդ օրն սկսվեց ճիշտ նույն կերպ, ինչպես դրա նախորդ օրը՝ ճաշարան այցով, չնայած, ես այլևս չէի փնտրում գեղատեսիլ օրիորդին այնպես եռանդով, զի համոզել էի ինձ, որ առավոտյան

և ցերեկը դա հատկապես դժվար է (չգիտեմ, թե որքանով է այս ասույթը համապատասխանում իրականությանը): Օճվում կրկին ոչ մի հետք նրանից, ինչպես նաև դրան հետևող ճաշին:

Իմ միտքը կլանված էր նրանով, և ես չէի կարողանում հանգիստ նստել իմ տեղում: Մտածել էի ես նրան մոտենալու մասին, պատկերացրել խոստովանությունս՝ «երիտասարդ լեդի, քեզ տեսնելու առաջին իսկ պահից դու դյուրեցիր ինձ անխնա և թափանցեցիր սրտիս խորքերը», թե ինչպես եմ ներկայանում նրան ու բարտերով ետ ստանում նրա անունը, ինչպես եմ հրավիրում կոկտեյլ ըմպելու և խոսում նրա զբաղմունքների ու հետաքրքրությունների մասին: Սակայն նման բանի նախադեպ չէր եղել և ես փոքր ինչ վարանում էի: Այնուամենայնիվ, որքան էլ որ անձկալի էր ինձ այս իրադարձությունը, ես, միևնույն է, չէի կարող հեշտությամբ իրագործել միտքս: Նախ և առաջ դժվար էր նրան գտնելը. ես տեսնում էի նրան խիստ սահմանափակ քանակությամբ վայրերում՝ ճաշարանում և համերգի վայրում: Երկրորդ՝ նա երբեք մենակ չէր. ճաշարան գալիս էր ընտանիքի հետ, իսկ համերգի բեմի դիմաց պարում էր քրոջ հետ, չհաշված, որ ընդամենը երկու-երեք տասնյակ մետր այն կողմ որևէ մի սեղանի շուրջ տեղավորված էր լինում նրա ընտանիքի մնացած կազմը:

Ես գիտակցում էի, որ շուտով մենք վերադառնալու ենք մեր երկրներ և ես այլևս հավիտյան զրկվելու եմ նրա ներկայությունը վայելելու հաճույքից: Ես գիտեի, որ նրա գայթակղությունը ինձ չէր լքելու նրանից հեռանալուց հետո դեռևս մի որոշ ժամանակ և թախծելու էի ես ու ճնշվելու էր սիրտս: Սակայն ես չէի ուզում, որ նրա մասին հուշս անհետ կորեր իմ մյուս՝ կարևոր ու անկարևոր բազմաթիվ այլ հիշողությունների մեջ: Եվ ես աստիճանաբար մտքիս մեջ զարգացրի եղածը արձանագրելու գաղափարը ու սենյակ հասնելուն պես ձեռնամուխ եղա սույն ասքը հյուսելուն:

Ցերեկը ես չլողացի ծովում, այլ միայն զբաղվեցի ընթերցանությամբ: Երեկոյան ճաշարանում բազմիցս փնտրեցի նրան, սակայն այդպես էլ չգտա: Հանկարծ նկատեցի նրա կազմվածքով մեկին ու սկսեցի աչքերով հետևել նրան: Բայց մի՞թե դա նա էր: Երևում է՝ ոչ: Բայց ես վստահ չէի այդ «ոչ»-ի մեջ ու շարունակում էի գննել նրան ու նրա սեղանը:

Երբ դուրս եկանք ճաշարանից և դիմում էինք դեպի համերգի վայրը ես անակնկալի եկա. բույսերի ճյուղերով կիսածածկված ապակիների ետևից շողաց նրա լուսապսակ երեսը: Նա նստած էր այնպիսի վայրում, որը, միևնույն է, չէր երևա ինձ իմ նստած տեղից կամ էլ կերևար միայն նրա բարեկազմ իրանը: Այնուամենայնիվ ես ավստացի, որ ժամանակին չէի նկատել նրան ու միաժամանակ վայելեցի այդ պահը: Դետքս ավարտեցի, երբ սկսեցինք առաջանալ:

Բեմի դիմաց կրկին խոնվել էին երեխաներ ու որոշ երիտասարդներ: Նրանց մեջ ես որսացի նրա՝ կարմիր դերիայով պարուրված մեջքը, որի վերին հատվածը ծածկել էր նրա ոսկեծամ հյուսը, ինչպես նաև նրա կողքին ճանաչեցի նրա՝ երկար, սպիտակ վերնաշապիկով և կարճ, չերևացող շորտերով ընկերակցուհուն:

Տանեցիներս տեղավորվեցին բեմի մատույցներում՝ մի քանի առանձին աթոռների, և ես քողարկված դժկամությամբ հետևեցի նրանց օրինակին: Չէ՞ որ ես գիտեի, որ նրա ընտանիքը հանգրվանել էր մեզանից ուղիղ գծով մոտ երեսուն մետր ետ, և երբ երգ ու պարը վերջանար ու նա գրավեր իր տեղն ընտանիքի մոտ, ես այլևս չէի կարողանա հիանալ նրա մանրանկար դեմքով:

Իմացա, որ տանեցիներս ուզում են գնալ փողոցում զբոսնելու և սկսեցի նրանց քաջալերել՝ միտք ունենալով մնալ, տեղափոխվել և ավելի հարմար տեղից ընդունել օրիորդի ցրած լույսը: Շուտով՝ ենթադրելով, որ տանեցիներս արդեն շարժվում են, ես առաջացա դեպի բեմից 7-8 մետրի վրա գտնվող սյունն ու այնտեղից սկսեցի անխնա դիտել պարող մուսային: Վճիտ ու լուսավոր էր իմ կանգնած տեղից երևում ամենը, ես պարզ էի տեսնում նրա դեմքի ձևերն ու մարմնի

կոտրատումները: Միայն զգուշանում էի նկատվելուց և երբ նա պտույտներ էր գործում, ես աշխատում էի արագ հայացքս այլ կողմ շարտել:

Ես պահ մի մտորեցի: Նա չէր երևում ծովափում, ուրեմն հավանաբար ժամանակն անց էր կացնում ավազանում: Երևի օգտակար կլինեի ճանաչել նրա հողաթափերը, միգուցե դրանց օգնությամբ կարողանայի հեշտությամբ գտնել նրան ավազանի լողորդների խառնակույտի մեջ: Այդ մասին մտածելս և հայացքս նրա ոտքերին նետելը մեկ եղավ: Աթոռների ու մարդկանց կուտակումների արանքից դժվարությամբ նկատեցի ճերմակ հողաթափերը, ինչպես նաև նրա քրոջ մուգ գույնի ծակոտկեն ոտնամանները:

Երգ ու պարն ավարտվելուց որոշ ժամանակ անց պարզվեց, որ տանեցիներս մտափոխվել են հորս գլխացավի պատճառով և մենք պետք է ցրվենք սենյակներով: Մահիճիս հասնելուն պես շտապեցի շարունակել ցերեկը կիսատ թողածս գործը, այն է՝ սույն պատմությունը շարադրելը: Այդ օրն առավել քան դժվար էր նիրհելը, ես երկար ժամանակ շուռումուռ եկա և միայն երկու-երեք ժամ անց թմրությունը պարուրեց ինձ՝ ետևում թողնելով այդտեղ գտնվելու իմ երրորդ օրը:

Բացվեց չորրորդ օրը, որը սկսվեց ճաշարան այցով և ծով գնալով: Ես կրկին օրվա միապաղաղությունը փորձում էի հակակշռել Ջեյ Լոնդոնի վիպակով և կողակիցներիս պատմություններին ունկնդիր լինելով, ինչու ոչ երբեմն էլ մասնակցելով:

Արևը դեռ շատ չէր բարձրացել, երբ ես թաքուն ծկեցի փայտե հովանոցի տակից ու շտապեցի դեպի հյուրանոց: Ես տրամադրվել էի սպառիչ որոնումով (exhaustive search) հաստ առ հաստ ստուգել ավազանի եզրերի բոլոր հողաթափերը ու գտնել նախորդ օրը հիշողությանս մեջ կնքած երկու գույգ ոտնամանները: Սակայն նոր էի ոտքս դրել մեր հյուրանոցի տարածք, երբ բոլոր հույսերս մի վայրկյանում հողին հավասարվեցին: Ես, իհարկե, պատկերացնում էի, որ մարդիկ շատ կլինեն և միտքս իրագործելը հեշտ չի լինելու, բայց այն, ինչ տեսա, գերազանցեց իմ սպասելիքները: Մարդիկ անթիվ անհամար էին, մորեխից էլ շատ, ինչպես, վատահ եմ, կնկարագրեր Սերո Խանզադյանը (տե՛ս «Միփթար սպարապետ»-ը): Այնտեղ ուղղակի չկար ասել գցելու տեղ, միավոր քառակուսի մետրի վրա կարելի էր գտնել առնվազն մեկ մարդու, և այդպես ողջ ավազանի շրջակայքում:

Ես հուսակորույս ու խորտակված ոգով, այնուամենայնիվ, սկսեցի անց կենալ ու աչքերով տնտղել երևացող ոտնամանները: Բայց դրանք անասելիորեն բյուր էին և ես հասկանում էի, որ խոտի դեզի մեջ ասեղ եմ փորձում գտնել: Վերջապես, հյուրանոցում պտույտ տալով և ապարդյուն փնտրտուքներիս անօգուտությունն ընդունելով սլացա ետ՝ ծովափ:

Այնտեղ ես կրկին ընկղմվեցի գրքիս մեջ: Կեսօր էր գրեթե, երբ միամիտ գլուխս բարձրացրի ու տապալանների վերջին շարքում շարժ նկատեցի ու աչքս ծակեց սպիտակ երկար վերնաշապիկով փոքր ինչ հաստիկ մի աղջիկ: Մի՞ թե դա այն գեղեցկուհու քույրը չէր: Ես հայացքս թեքեցի՝ նրանց կողմից չկասկածվելու համար և գիրքս անմիջապես դեմ նետելով վեր թռա տեղիցս ու ձևացրեցի, թե դուրս եմ գալիս ավազի տիրույթից: Սակայն ետ դառնալիս ես այլևս չգտա նրանց, բոլորը չքացել էին: Ես խիստ վրդովվեցի, սակայն ևս մի քանի անգամ մանրակրկիտ գննեցի տապալանների ողջ վերջին շերտը: Չգտնելով փնտրածս ես անցա մնացած բոլոր անձրևոցները գննելուն, մասնավորապես սպիտակ վերնաշապիկ փնտրելուն, բայց կրկին ոչինչ:

Զայրությո՞ւր պատեց ինձ, բայց ինձ չկորցրի: Հիշելով, թե ինչքան է սիրում այդ օրիորդը պարել և խառնվել ընդհանուր զվարճանքին ես ենթադրեցի, որ միգուցե նա մասնակցում է ջրային գիմնաստիկային, որն այդ պահին ընթացքի մեջ էր: Նետվեցի դեպի ծովի այն հատվածը, որտեղ

մարզվում էին, և հատ առ հատ աչքի անցկացրի բոլոր մասնակիցներին՝ հաջողություն չունենալով: Վերադարձա ետ ու վերջապես գննեցի ծովափնյա բարը. այնքա՛ն մարդ կար այնտեղ: Այնտեղ նստածներին մեծ դժվարությամբ մի կերպ զանազանելով կարծես թե նկատեցի օրիորդին, նրա ընկերակցուհուն և մի տղամարդու, որը ենթադրաբար նրա հայրն էր: Ես վստահ չէի, որ դա հենց նա է և փորձեցի ավելի ուշադիր դիտել: Բայց այդ տղամարդը նկատեց իմ ականապիշ հայացքը ու ես ստիպված եղա ավելի հազվադեպ նայել այդ կողմ:

Շուտով մենք լքեցինք ափը ու ես ներքուստ ինձ ծվեն-ծվեն էի անում նրա համար, որ աչքիցս կորցրի առաջին անգամ նկատածս սպիտակ վերնաշապիկը: Ճաշն անցավ առանց որևէ արտառոց պատահարի: Սենյակ մտնելուն պես վրա ընկա համակարգչին ու սկսեցի շտապով չխկչխկացնել ստեղնաշարը՝ նոթերն անցկացնելով: Ես արդեն լիովին մոռացել էի իմ «Կոմբինատոր ուռուցիկություն» գրքի մասին:

Մեկ-երկու ժամ անց կրկին ծովի ժամանակն էր: Ամեն ինչ տաղտուկ էր, ինչպես միշտ: Վերադառնալիս քայլում էինք գրուցելով՝ ես առջևից, և դեռ դուրս չէինք եկել Al Dau-ի տարածքից, երբ ես ինձնից հինգ-վեց մետրի վրա հայտնաբերեցի օրիորդի գեղատեսիլ պատկերը. վեհ էր նա ու փառավոր իր գեղեցկության մեջ: Հագին ուներ սև վերնագգեստ՝ նուրբ կտորից կարված երկար շրջագգեստով: Նա քայլում էր առջևից, նրան հետևում էր իր սպիտակ վերնաշապիկով քույրը, ինչպես նաև նրա, ենթադրաբար, հայրն ու մայրը՝ ևս մի քանի քայլ ետևից (հնարավոր է, որ ես մոռացա նշել նաև մի փոքրիկ աղջկա՝ նրանց ենթադրյալ քրոջը): Ես մի պահ ցնցվեցի նրա գեղեցկությունից ու գլուխս կախեցի: Կախեց գլուխը և նա, չգիտեմ՝ ինձանից խուսափելու համար, թե ակամա:

Ճաշարան մտնելուն պես ես կրկին բախվեցի ոսկեծամ գեղուհուն՝ իր ուղեկցուհու հետ ուտելիք ընտրելիս: Նրանք սրահի կենտրոնական՝ ամերիկյան ֆուտբոլի գնդակի տեսք ունեցող մասի ուտելիքներն ընտրում էին այն ժամալաքի ուղղությամբ շրջանցելով, իսկ ես՝ ճիշտ հակառակը՝ այն ժամալաքին հակառակ շրջանցելով: Մի քանի անգամ մենք անցանք իրար դիմացով, և նկատելի էր, թե ինչպես նա խուսափում էր ինձ դեմ հանդիման գալուց՝ քրոջ մյուս կողմն անցնելով:

Մեր սեղանների դասավորության և նրա նստած դիրքի պատճառով չէի կարող տեսնել նրա չքնաղ երեսը ուր էլ որ նստեի, ուստի բավարարվեցի միայն նրա նրբակազմ իրանով ու ոսկեգույն գիսակներով:

Տանեցիներս ուզում էին դուրս գալ հյուրանոցի տարածքից և Մանեին թողեցին իմ հսկողությանը: Համերգի վայրում մենք նստեցինք բեմից ամենահեռու սեղանի շուրջ, բայց շուտով Մանեն ցանկություն հայտնեց խաղալու մանկական տարածքում և ես չմերժեցի: Պարն սկսեց և ես ականատես եղա, թե ինչպես պարողների գնացքի մեջ շոգեքարշ-պարողի ետևից հառնեց չքնաղի ազնվագարմ գլուխը ու ողջ շարքն ուղղվեց դեպի բեմի մատույցներ: Ես հետևեցի նրանց ու մի քանի վայրկյան անց արդեն թիկնել էի բեմին մոտ գտնվող սյանը, ինչպես արել էի դրա նախորդ օրը, ու մի քանի մետրից սկսեցի վայելել օրիորդի ամենօրյա անհոգ ու ուրախ պարը:

Դետքի ընթացքում ես հիշեցի Մանեին ու վազքով եկա մանկական հրապարակ, զի նա չէր կարող ինձ գտնել այդ սյան ետևում, սակայն չգտա նրան այնտեղ: Փոխարենը տեսա, թե ինչպես նա լացակումած աչքերով վազեց դեպի ինձ սեղանների կողմից: Նա կարծել էր, որ ինձ կորցրել է ու վախեցել էր: Ես, իհարկե, կրելով ինձ վրա արցունքների ողջ մեղքը, ցույց տվեցի իմ գտնվելու վայրն ու մի փոքր էլ սյան մոտից աչք ածելով կոնքերով պարին վերադարձա ու Մանեի հետ գրավեցի բեմից ամենահեռու սեղաններից մեկը, քաջ գիտենալով, որ պարողները ուր որ է ցրվելու են:

Ես դիտմամբ նստեցի այնպիսի տեղում, որ կարողանամ անխափան կերպով հաճոյանալ մեզանից 5-6 մետր առաջ իր ընտանիքի հետ տեղ գտած օրիորդի շքեղ գեղեցկությամբ: Մանեն առաջարկեց խաղալ այլանս, և ես համաձայնեցի: Դա կօգնէր ինձ ավելի քիչ կասկածներ ձգել վրաս, եթէ հանկարծ նրա ընտանիքից որևէ մէկը նկատէր իմ մշտական ներկայությունը իրենց շրջակայքում: Խաղի ընթացքում ես մերթ ընդ մերթ հայացքներ էի նետում օրիորդի ուղղությամբ: Զգուշավորությունս ինձ թույլ չէր տալիս նայել նրան չափից դուրս երկար: Այնուամենայնիվ, հերթական անգամ նրանց կողմը թեքվելով նկատեցի, թէ ինչպէս սպիտակ վերնաշապիկով մյուս օրիորդը մտահոգ հայացքով նայեց ինձ: Ես, կարծես թէ, մռայլ տպավորություն էի գործել նրա վրա, նրան դուր չէր գալիս իմ մշտապէս որոնող հայացքը:

Որոշ ժամանակ անց, երբ կրկին թեքվեցի դեպի նրանց սեղանը, չգտա օրիորդին: Կարծեցի, որ միգուցէ ես եմ նրա անհետացման պատճառը, սակայն հետո տեսա, որ նրա տեղում նստած էր ինչ որ կին ու եռանդով գրուցում էր նրա ընտանիքի հետ, իսկ օրիորդի գլուխը ծածկվում էր հոր գլխով:

Խաղից հոգնելով ու հասկանալով, որ իմ երկար ներկայությունը կարող է վատացնել իրերի վիճակը, շուտով հավաքվեցի ու դիմեցի սենյակ Մանեի հետ: Թղթին (Էլեկտրոնային) հանձնելով պատմությանս հերթական հատվածը ես թեքվեցի ննջելու, հիասթափված այդ օրվա իմ անհաջողություններից ու սպասելով գալիքին:

Հինգերորդ օրվա սկիզբը չէր տարբերվում մյուս առավոտներից և ոչ մի բանով: Ստանդարտ նախաճաշին հետևեց ծովափին վիպակի ընթերցանությունը: Ես մի քանի անգամ անհույս հայացքով տնտղեցի ափի ամբոխին, երբ մոտեցավ կեսօրը, սակայն գուր:

Այդ առավոտը, թերևս, հատկանշական էր նրանով, որ մայրս փորձեց մի մարզիչի օգնությամբ ինձ քաշել տանել ծով՝ գիմնաստիկայի, իսկ դարթս խաղի մի զինվորագրող երիտասարդ աղջիկ ատամներով կառչել էր ինձանից ու ուզում էր գրանցել խաղացողների ցուցակում, սակայն ես երկու պատուհասներից էլ հաջողությամբ խուսանավեցի:

Ճաշն ավելի քան սովորական էր, սենյակում պատմությունս գրանցելն՝ արդեն ամենօրյա, իսկ ծով երկրորդ այցը կարելի էր մեծ ճշտությամբ ընդունել որպէս նախորդ օրերին ծով երկրորդ այցերի միջինը: Սակայն մեծ էր իմ զարմանքը, երբ երեկոյան ծովից վերադառնալիս մեր սենյակների՝ ութերորդ մասնաշենք մուտք գործելուց հանդիպեցի օրիորդին ու նրա քրոջը, ովքեր դուրս էին եկել դիմացի ծածկի տակ նստելու: Ինչ է, նրանք նու՞յնպէս այդ շենքում էին ապաստանել: Ինչպէ՞ս այսքան ժամանակ չէին պատահել ինձ:

Վեր բարձրանալիս պատուհանից որոշ չափով երևում էին նրանք, բայց ես խուսափեցի երկար նայելուց, զի երկար վերնաշապիկով օրիորդը կարող էր նկատել ինձ: Շտապ լոզանք ընդունեցի և դուրս վազեցի, բայց նրանք այլևս այնտեղ չէին:

Ընթրիքի մեր ամենօրյա ժամից փոքր ինչ ուշացանք՝ Թագուհու և Ռուստամի համար գիդի հետ ճանապարհորդություն ընտրելով, և հակառակի պէս ազատ սեղան չկար այն սրահում, որտեղ մենք միշտ նախաճաշում, ճաշում և ընթրում էինք: Ես հասկացա, որ ճաշարանում այդ օրը չեմ գտնի օրիորդին ու հիասթափված սկսեցի ուտելիք հավաքել:

Սեղանից ելա բոլորից շուտ ու շտապեցի համերգի վայր: Դիմեցի ուղիղ այն նույն իմ պան մոտ, բայց նա չկար պարողների մեջ: Ես մի պահ անակնկալի եկած չէի հասկանում, թէ ինչ է եղել, մի՞ թէ նա այսօր չէր եկել այստեղ: Չէի հասցրել մտքերս ի մի բերել, երբ մեկ այլ անակնկալ պատահեց ինձ. ետևիցս ինձ դարանեցին մայրս ու մորաքույրս և իրենց հետ տարան նստեցրին բեմի մատույցներում:

Ես չէի կարող այդպես հանգիստ նստել տեղումս, չէ՞ որ ինձ բացարձակապես հետաքրքիր չէին ոչ երգը, ոչ պարը, և ոչ էլ հատկապես դրանց հետևող շոուն: Ինձ պետք էր այլ բան, և ես տեղս լքելով սկսեցի այս ու այն կողմ քայլել ու սեղանները շրջապատած ամբոխի մեջ փնտրել օրհորդի ոսկեգույն գլուխը: Երկու-երեք անգամ ես սխալմամբ համարեցի, որ գտել եմ նրան, սակայն իսկույն էլ ընդունեցի վրիպումներս:

Վերջապես, երբ ես մտահոգ թիկնել էի մի բարի կողքի սյան, իմ առաջ նկարվեց կապույտ վերնագգեստով ու սև շորտերով մի բարեկազմ մարմին: Դա նա էր: Նա հայտնվեց անսպասելիորեն, այնտեղից, որտեղից չէի սպասում, և ծանոթ չլինելով նրա հանդերձանքի հետ ես նրան ճանաչեցի իր պոչ կապած ոսկեծամով: Մի պահ բարկրանք ապրեցի, զի ես արդեն հույսս կորցրել էի, որ նրան ընդհանրապես կգտնեմ այդտեղ: Ես փոքր ինչ այս կողմ եկա՝ կանգնելով ավելի ապահով հեռավորության վրա ու աչքի ծայրով ֆիքսեցի նրա հետագիծը: Հեռացա դեպի ամենածայրի սեղաններն ու նստեցի մեկի մոտ, դիտելով նրա կողմը: Նա այդ օրը կարծես թե միայն իր սպիտակագգեստ ընկերակցուհու հետ էր: Ես մի քանի անգամ փորձեցի այս ու այն կողմ գնալ՝ հարմար դիրք բռնելու, բայց դա ինձ չհաջողվեց: Միայն մի պահ կարողացա տեսնել նրա լուսապսակ երեսը, երբ ընդառաջ էի գնում տանեցիներին, ովքեր հեռանում էին այդտեղից: Ես նույնպես միացա նրանց ու դիմեցի սենյակ:

Բարկացած էի ես իրավիճակի անհեթեթությունից ու իմ անգործությունից: Ի՞նչ պետք է ես անեի, որպեսզի լցնեի հոգուս դատարկությունը և այլևս հիվանդագին չթախձեի նրան տեսնել չկարողանալուց:

Սենյակում ես արագորեն թղթին (էլեկտրոնային) հանձնեցի օրվա անցքերը և թեքվեցի ննջելու: Հանկարծ ինձ մոտ ծագեց մի խելահեղ միտք: Իմ այս պատմությունը կորչելու էր գնար, եթե ես այն այդպես էլ անհայտ պահեի ուրիշներից և հատկապես օրհորդից: Ճիշտ է, այն հեռու էր լիարժեք գեղարվեստական գործ լինելուց, սակայն այնուամենայնիվ գեղարվեստի որոշ տարրեր պարունակում էր: Այս միտքը ցնցեց ինձ ու ես պատկերացրի, թե ինչպես կարելի էր հանդիպել օրհորդին ու նրա ուղեկցուհուն և հայտնել իրենց՝ գրեթե գեղարվեստական գործի գլխավոր հերոսուհին լինելու իրողությունը:

Սակայն շատ չանցած ես հանգստացա և փորձեցի դուրս հանել այդ միտքը գլխիցս. չէ՞ որ գործը դեռ գրված ավարտված չէր: Սակայն դա հոգ չէր, կարելի էր նրա կոնտակտն ստանալ և ուղարկել ավարտելուց հետո: Կար ավելի լուրջ խնդիր՝ լեզուն: Իհարկե, միամտություն կլիներ կարծել, որ նա հայերեն հասկանում է: Նրա ինչի՞ն պետք կլիներ այս անհասկանալի հիերոգլիֆների՝ իր համար միտք չարտահայտող ամբողջությունը: Կարելի էր պատմվածքս թարգմանել անգլերեն, նա հավանաբար այդպես ինչ-որ բան կհասկանար: Սակայն այժմ էլ մեկ այլ բարդություն էր առաջանում՝ թարգմանել տեքստը անգլերեն այնպես, որ այն չկորցնեի իր գեղարվեստական արժեքը, ինչպես նաև արժանի ուշադրություն դարձնել բազում օգտագործված հայերեն բառերի հոմանիշների վրա և գտնել համարժեք անգլերենները: Այս գործը իրոք բարդ էր և ես ձեռք քաշեցի դրանից: Այդպես քամին տարավ իր իսկ բերած ցնորական գաղափարը՝ օրհորդին տեքստի մասին հայտնելու:

Դրանից հետո ինձ այցելեց մեկ այլ միտք: Ես հիշեցի ընդունարանի դիմացի սրահում դրված ռոյալը և մտքիս դրեցի առավոտյան՝ նախաճաշի ժամին, նրա վրա մի բան նվազել, միգուցե օրհորդը անցնելիս լինեի այդ պահին դահլիճով և նրա ուշադրությունը գրավեր իմ նվազը՝ Յաննիի «One man's dream» գործը: Այս մտքով էլ ընկղմվեցի քնի մեջ:

Երբ բացվեց վեցերորդ առավուտը, ես հիշեցի նվագի մտքի մասին ու ընդունարանի դիմացով անցնելիս մոտեցա ռոյալին: Այն բացելու մի քանի անհաջող փորձից հետո ես մայրս մոտեցանք ընդունարան և պարզեցինք, որ ռոյալը փակ է դիտմամբ, և որ այն բացվում է միայն այն օրերին, երբ հատուկ հրավիրում են երաժիշտի:

Ինչ արած, մենք դիմեցինք ճաշարան, որից հետո այցելեցինք ծով: Երբ կեսօր դարձավ, ես մորաքրոջս ու Մանեի հետ ուղղվեցի դեպի մեր հյուրանոցի ավագանի սահարանները: Ճիշտն ասած ինձ մոտ չկար էլ այնտեղով սահելու առանձնակի ցանկություն: Ես ուղղակի մտածեցի, որ արժե գոնե մի անգամ փորձել այն, գոնե վերջին օրը: Սահեցի երեք տարբեր սահարաններով, ուր ոգեվորված ինձ ուղարկել էր Մանեն, սակայն այդպես էլ չհասկացա, թե ինչու՞մ էր հաճույքը: Ես երևի չափից դուրս շուտ էի ծերացել:

Բազմիցս գննեցի շրջակայքը, երբ դեռ այնտեղ էի, բայց չգտա օրիորդի ու նրա ուղեկցուհու և ոչ մի հետք:

Ճաշն անցավ միապաղաղ, նույնքան միապաղաղ էլ ծով երկրորդ այցը: Ճաշարան գնացի մերոնց մեջ առաջինը՝ վախենալով, որ ուշանալու դեպքում նախորդ օրվա պես մեզ կնստեցնեն այլ սրահում ու ես կզրկվեմ օրիորդի տեսարանից: Անկյունում տեղ զբաղեցնելով աչքերս պլշեցի դեպի մարդկանց խառնիխուռն անցուդարձը: Գրեթե ժամուկես քննելով ընթրողներին ես ոչ մի կերպ չնկատեցի օրիորդի ընտանիքի որևէ անդամի:

Կրկին մյուսներից շուտ գնացի համերգի վայր ու գրեթե նույն պահին էլ տեսա, թե ինչպես մի սեղանից պարի նետվեցին երկու քույրերը: Ես փութկոտ հասա իմ պանը ու հափշտակվեցի օրիորդի ձևերով: Նա այդ օրը հագել էր բաց կապույտ կամ մանուշակագույն (չկարողացա հստակ որոշել կիսախավարի պատճառով) շորտեր ու վերնազգեստ, ինչպես նաև կրում էր նարնջա-շագանակագույն թիթեռ ակնոցը, իսկ նրա քույրը՝ սպիտակ դերիա: Ես ախորժակով աչքերով լափում էի նրան և երբ նա շրջվում էր ես այլևս հայացքս չէի շեղում նրանից, նայում էի ուղիղ դեմքին և ոչ մի սանտիմետր այն կողմ: Հաջորդ օրը ես նրան կարող էի այլևս չտեսնել, ուստի մի փոքր տեսագրեցի նրա պարը՝ որպես հուշ:

Հակառակի պես այդ օրը պարը կարճ տևեց: Օրիորդի՝ իր ընտանիքի մոտ տեղավորվելուց շատ չանցած ես արդեն նրա թիկունքում էի՝ 8-9 մետր անկյունագծով աջ: Հատկանշական է, որ այդ օրը նրանց սեղանին վեր էր խոյանում մի մեծ նարգիլե: Դժբախտաբար տեղս այնքան էլ հարմար չէր, ուստի միացա տանեցիներին: Շուտով նրանց հետ քայլեցի հյուրանոցից դուրս՝ ծովեզրին գուգահեռ պողոտայով և վերադառնալիս մի անգամ էլ աչք նետելով օրիորդի կողմը քայլեցի սենյակ:

Մի օր էլ չէր անցնի, երբ մենք կլքեինք Aqua Magic-ը և ես արդեն համակերպվել էի օրիորդին մոտենալ չկարողանալու հետ: Բայց իմ մեջ եռ էր գալիս նրա ինքնությունն իմանալու ցանկությունը: Ես նույնիսկ համարձակվել էի մտածել հյուրանոցի տվյալների բազան գտնել փորձելու մասին, իհարկե, եթե կարողանայի ճարել համապատասխան գիտելիքներ ունեցող ցանցահեռի: Այնուամենայնիվ այդ ցնորամիտ գաղափարը հեռու էր կյանքի կոչվելու հնարավորությունից ու ես կրկին սանձեցի իմ մոլեգնող հոգու այդ հանդուգն պոռթկումը:

Մնացել էր մի օր, մի միակ օր, երբ ես, հնարավոր է, վերջին հնարավորություն կունենայի գնալվելու աշխարհի հրաշալիքներից հրաշալիքով: Եվ ես ճնշվում էի՝ գիտակցելով աղետի ամեհիությունն ու անխուսափելիությունը, մինչդեռ քունը վրա հասավ և թեթևացրեց այդ խորը վշտի ծանրությունը:

Վերջին՝ յոթերորդ օրը նախաճաշելուց հետո դիմեցինք ծովափ սովորականից ավելի շուտ, վասնզի քիչ էր մնում սենյակները ազատելու ժամին: Ես նախորդ օրը հասցրել էի ավարտել «Կոզերնակ Ջերին» և ինձ զբաղեցրի հեռախոսի մեջ տեղադրած դաշնամուրը նվագելով ու նույնիսկ լուծեցի «Կոմբինատոր ուռուցիկություն» գրքի ևս մի բաց թողած խնդիր: Շուտով վերդարձանք, սենյակները հանձնեցինք և մեր իրերը տեղավորեցինք մորաքրոջս և Ռուստամի սենյակում, որովհետև նրանք դեռ երեք օր էլ ունեին այնտեղ մնալու: Դրանից հետո տեղավորվեցինք ընդունարանի դիմացի բազմոցներին ու սկսեցինք սպասել:

Չուզենալով ժամանակ կորցնել ես դուրս եկա և սկսեցի շրջել ավազաններով՝ փնտրելով նրան, ո՛վ միայն իմաստավորում էր իմ այդտեղ գտնվելը: Հանկարծ նկատեցի լողազգեստով մի նիհար երիտասարդ աղջկա, ով նստել էր ավազանի դիմացի բարի սեղաններից մեկի շուրջ: Ես համարեցի, որ գտել եմ փնտրածս, բայց համոզվելու համար շրջանցեցի մի մասնաշենքը և սուր նայեցի դեմքին, իսկ սպիտակ հողաթափերը տեսնելուց հետո այլևս կասկած չէր մնում: Փութկոտ դիմեցի դեպի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի բալկոնն ու կախվեցի այդ աղջկա վրա: Ինչ որ անհամաչափություն կար նրա մեջ, ինչ որ թերություն, որն ինձ դուր չէկավ: Որոշ ժամանակ ուշադրությամբ դիտելով նրան ու տեսնելով նրան շրջապատող՝ ինձ անձանոթ մարդկանց հասկացա, որ սխալվել եմ ու քիթս կախ ետ գնացի վեր ընկա բազմոցին:

Հանկարծ մազերը պոչ կապող մի երիտասարդ իր, կարծես թե, ընկերուհու կամ կնոջ հետ, ինչպես նաև մի ավելի տարեց կնոջ հետ մոտեցավ ռոյալին: Հյուրանոցի աշխատակիցը այն բացեց ու տղան սկսեց մեկը մյուսի հետևից կատարել ոչ պարզ դասական գործեր: Նրան շրջապատող մի քանի ունկնդիրներ, ինչպես նաև ես ու Ռուստամը, վարձատրեցինք նրան ծափահարություններով: Մի պահ մտածեցի իմացածս գործերից մեկը կատարելու մասին, սակայն հիշելով, թե ինչպես մի անգամ կումիտեի ժամանակ ոտքով անհաջող հարվածի փորձ անելուց հետո սենսեյ Արտյոմը սաստեց ինձ «Եթե ոտքդ վեր չի ելնում, ինչու ես ոտքով հարվածում» ձևով, ես հրաժարվեցի այդ ռիսկային գործից, զի այժմ էլ իմ ունակություններն ու վարպետությունն այդքան բարձր չէին հասնում:

Նվագն ավարտվելուց հետո շատ չանցած ինձ մոտեցավ մորաքույրս և խնդրեց օգնել իրեն բանակցելու ընդունարանի աշխատակիցների հետ իրեն օգնելու համար, որպեսզի օգնեին վերցնել վանդակապատ պատուհանից դուրս ընկած մի խխունջ, որը Ռուստամն էր գտել ծովից՝ դրանից մի քանի օր առաջ: Բանն այն էր, որ խխունջն ընկել էր հյուրանոցի այնպիսի հատվածում, որտեղ տանող միակ դուռը կողպված էր ու ոչ ոք չէր կարողանում այն բացել: Երկար սպասեցնելուց հետո վերջապես ընդունարանից հայտնվեց աշխատակիցը ու հարցը կարգավորեց: Իսկ մինչ նրա գալը, երբ ես ու մորաքույրս կանգնած էինք աստիճանների մոտ, իմ առջևով քամու պես անցավ սքանչելի օրիորդն իր քրոջ հետ ու իջավ ամենացածի հարկ: Փաստորեն նրանք այսքան ժամանակ եղել էին իմ քթի տակ (իմ սենյակը նույն մասնաշենքում էր՝ երկու հարկ վերև) ու ես միայն վերջին պահին էի իմանում այդ մասին:

Մի պահ այդտեղից գնալուց և շտապ վերադառնալուց հետո կախվեցի աստիճանների բազրիքից ու սկսեցի հսկել մասնաշենքի մուտքը: Հանկարծ տեսա սև լողազգեստով մի երիտասարդ աղջկա, ով շտապով դուրս եկավ շենքից: Ես արագ նստեցի շենքի դիմացի նստարանին ու աչքերով հետևեցի նրան: Բայց նա խիստ հեռու էր ինձանից ու ես կորցրի նրան մարդկանց ծեփի մեջ:

Ես վեր թռա տեղիցս ու սկսեցի զվոնել ավազանների շուրջը՝ փնտրելով նրան: Հանկարծ գտա մի սև լողազգեստով երիտասարդ աղջկա, ում դիմաց պառկած էր մի փոքր հաստլիկ աղջիկ ու մի կին էլ: Ես նույնիսկ չկասկածեցի էլ հաջողությանս վրա ու վազեցի հարմար տեղ փնտրելու, որպեսզի հետևեմ նրան: Բարձրացա դիմացի շենքի երկրորդ հարկի բալկոն: Ոչ, դա այնքան էլ լավ տեղ չէր: Դիմեցի մյուս մասնաշենքի մոտ՝ ամենաբարձրի, ու բարձրացա տանիք: Այնտեղ կախվեցի

բազրիքներից ու սկսեցի յոթերորդ հարկի բարձրությունից գննել գտածս: Բայց մի տասը ընդհանուր գիտակցեցի, որ գրողը տանի, կրկին սխալվել եմ, սա լրիվ ուրիշ մեկն է:

Ես այլալված վերադարձա ընդունարանի բազմոցին ու այնտեղ մի փոքր էլ ժամանակ սպանելուց հետո նորից դուրս եկա որսի: Նստեցի մեր մասնաշենքի դիմացի նստարանին ու համբերատարորեն սկսեցի սպասել: Ավագանը փակել էին, ուստի բոլորը սկսեցին ցրվել տներով: Ես վստահ էի, որ օրիորդն էլ է ավագանում և ուր որ է նա էլ կհայտնվի: Որոշ ժամանակ անց ես ճանաչեցի ճիշտ նրա կազմվածքը՝ մարմնագույն վերնագգեստի ու սև շորտերի մեջ: Նա իմ դիմացով մուտք գործեց շենք՝ գլուխը համեստորեն կախելով:

Դա էլ ինձ բավական էր: Իմ հաշվարկներով դեռ օրիորդի՝ ընթրիքի գալու ժամը չէր և ես խաղաղ դիմեցի ընդունարանի բազմոցի մոտ: Մեծ էր իմ զարմանքը, երբ ես տեսա նրան՝ այդտեղով անցնելիս: Էլ ավելի տարօրինակ էր, որ ցած իջնելուց հետո ճաշարան գնալու փոխարեն նա դուրս եկավ շենքից: Ես նետվեցի բալկոն՝ նրա հետագիծը տեսնելու, բայց նա չբացավ:

Մենք շուտով իջանք ճաշարան: Իմ հայացքը արդեն որերորդ օրն էր ողջ ընթրիքի ընթացքում ուղղված էր դեպի ճաշարանի դահլիճը, որպեսզի բաց չթողնեի մանրանկար օրիորդին: Հանկարծ հայտնվեց նա, ում տեսել էի դրանից տասը ընդհանուր մարմնագույն վերնագգեստով: Բայց մի բան այն չէր, նա գրկեց իր հետի երեխային ու սկսեց ուտելիք հավաքել: Լարելով հիշողությունս ես մտաբերեցի, որ այդ կնոջը ես էլի եմ խառնել օրիորդի հետ: Դա արդեն օրվա երրորդ անգամն էր, որ ես լրջորեն սխալվել էի: Ախր այնքան շատ էին նրա կազմվածքն ու գլուխն ունեցող մարդիկ:

Անցավ բավականին ժամանակ և վերջապես երևաց շողացող ոսկեծամ՝ իսկական գլուխը: Ցավոք այն շուտով էլ անհետացավ պատի ետևում, կարծես թե նա նստում էր ինձ համար չերևացող տեղում: Բայց ամենը դեռ կորած չէր: Երեկոյան երգն ու պարը դեռ առջևում էր, ես դեռ կարող էի մի անգամ էլ հագուրդ տալ նրա կենարար գեղեցկությունը ըմբռնելու ծարավիս:

Բայց իրերը այլ ընթացք ստացան: Երբ մայրս միացավ սեղանին, նա ինձ պատվիրեց հացը վերջացնելուն պես գնալ մորաքրոջս մոտ ու խնամել նրան, որովհետև նա վատառողջ էր: Ես այնքան էլ չհասկացա, թե ինչու նա այդքան լուրջ ու մռայլ ձևով խոսեց և շարունակեցի անտարբեր գննել դահլիճը: Շուտով Ռուստամն ընթրիքը թողեց ու գնաց նրա մոտ: Որոշ ժամանակ անց հայրս ու մայրս նույնպես նետվեցին այնտեղ, մորաքույրս ավելի էր վատացել:

Ես սթափվեցի իմ անհավատությունից: Փաստորեն ինչ-որ լուրջ բան էր եղել: Ուրեմն պետք էր անպայման այնտեղ լինել: Իսկ օրիորդը: Ինչպե՞ս ես բաց թողնեի նրան վերջին անգամ տեսնելու իմ եզակի հնարավորությունը:

Իմ աչքի առաջ եկավ հինգ տարի առաջվա՝ Իսպանիայի իմ հիվանդությունը: Ես մի քանի օր շարունակ չէի կարողանում ոչինչ ուտել, կերածս էլ անմիջապես ետ էր գալիս: Ես ուժասպառ էի ու հալումաշ, ջերմում էի, փսխում, իսկ փորլուծությունը մյուս կողմից էր ինձ նվաղեցնում: Ո՞վ էր ողջ ժամանակ ինձ խնամում, եթե ոչ մորաքույրս: Ո՞վ էր ողջ օրը հետևում ինձ և օգնում: Վերջապես, ո՞վ էր ինձ փոքրուց այդքան սիրել ու գուրգուրել:

Ինձ մի քանի անգամ հանդիպած օրիորդին, որի անունը նույնիսկ չգիտեի, տեղավորեցի կշեռքի մի նժարին: Եվ երբ հոգատար մորաքրոջս դրեցի մյուս նժարին, առաջինը պոկվեց նետվեց վեր: Ու՛մ այլևս պետք կլինեի ես, եթե գնայի ցղվեի ուրախ երգ ու պարի մեջ՝ ինձ ինչ որ անձանդի մի քանի անգամ հեռվից աղոտ ու խավարամած տեսնելու համար այնժամ, երբ մորաքույրս խնամքի կարիք ուներ:

Դեպքի վայրից կանչվելով սուրացի այնտեղ: Ես ցնցվեցի սենյակ մտնելուն պես. մորաքույրս պառկած էր անկողնում՝ հոգնած ու ուժասպառ: Նա կծկվում էր և շուռուժուռ գալիս, հատաչում էր

ու գառանցում: Մահիճի դիմաց դրված էր աղբարկղը, որը ծառայում էր որպես փսխուքի տաշտ: Նրա աչքերից արցունքներ էին գնում ու նա աստված էր կանչում:

Բոլորս այնտեղ էինք ու անում էինք այն, ինչ հրահանգում էր գլխավոր խնամողը՝ մայրս: Համբերատար և համառ խնամքի շնորհիվ նրա ջերմությունն իջնում էր աստիճանաբար, այնուամենայնիվ խիստ դանդաղորեն: Մեկ-երկու ժամ անց նա համեմատաբար լավ էր: Հայրս ու Մանեն ընթացքում հեռացել էին բազմոցների մոտ, իսկ ես ու Ռուստամը դուրս եկանք սենյակից՝ օղափոխվելու: Մենք քննարկում էինք երկնքի բաց գույնը, երբ երկրորդ անգամ այդ միջանցքով քամու նման անցավ օրիորդն իր քրոջ հետ: Նա այս անգամ պատճենել էր իր քրոջ զգեստը՝ երկար սպիտակ վերնաշապիկն ու կարճ շորտերը:

Երբ նրանք փոքր ինչ հեռացան, ես Ռուստամին ասացի, թե գնում եմ զբոսնելու ու նետվեցի նրանց ետևից: Իհարկե, ես մտքիս մեջ քննարկել էի տարբերակը, որ նրանք կանգ առնեն ճանապարհին ինչ որ մի տեղ և ես կվառվեմ: Բայց նոր էի մուտք գործել հիմնական շենք, երբ նրանք երկուսով կրկին փոթորիկի նման անցան իմ կողքով՝ ընդունարանի աշխատողի հետ: Ես սահուն թեքվեցի բազմոցների մոտ, իբր թե հորս մոտ էի եկել: Ետ դառնալիս տեսա երկու քույրերին կանգնած բանկոմատի մոտ, ու երբ նրանց խնամքով շրջանցեցի ու դուրս եկա շենքից հասկացա, որ այդտեղ կանգնած էր նաև Ռուստամը և իսկույն էլ ետ-ետ քայլելով հասա նրան: Մենք քննարկում էինք մեր թռիչքի ժամն ու ցուցակները՝ բանկոմատի կողքի պաստառների վրա, երբ հայտնաբերեցի, որ քույրերը չքացել են: Սակայն անորոշությունը կարճ տևեց, նրանք հայտնվեցին բարի մոտ: Ես շտապեցի սրահի կենտրոնի քառակուսաձև անցքի բազրիքի մոտ ու նրանց սկսեցի հետևել: Բայց չկարողացա երկար ժամանակ այնտեղ մնալ: Մենք բոլորովս պետք է շտապեինք սենյակ հագնվելու ու պատրաստելու իրերը, ավտոբուսն ուր որ է կժամաներ: Այդպես հրաժեշտ տվեցինք մորաքրոջս, իսկ Ռուստամը եկավ մեզ ճանապարհելու:

Ելքի մոտ իրերը դնելուց հետո ես նետվեցի բազրիքներից կախվելու: Նայեցի առաստաղից կախված քսանչորս հատ քսանանիստ ջահերին, այդ հրաշալի բազմանիստի, որը ինձ ավելի հարազատ էր դարձնում միջավայրը: Հետո վճռականորեն շեշտակի նայեցի ճիշտ չքնադի կողմը՝ նրա երեսին: Այդպես նայեցի մի քանի վայրկյան, բայց անիծյալ կիսախավարը խոչնդոտում էր ինձ վերջին անգամ հիանալ այդ սքանչելիքով:

Ավտոբուսը կանգ առավ: Ես մյուսների հետ ուղղվեցի դեպի այն՝ քարշ տալով մեր իրերը: Տեղավորվեցի ու թեքվեցի դեպի դահլիճը: Այդտեղից ոչինչ չէր երևում, միայն սրահի կենտրոնական մասը: Գիդը իր «ուշադրություն» հայտարարությամբ շեղեց ինձ դեպի նա, ու երբ մեկ էլ թեքվեցի դեպի դահլիճը, վայրկյանի հարյուրերորդական մասում միայն հասցրի որսալ, թե ինչպես պատի ետևը չքացան երկու քույրերը, ճիշտ այնպես, ինչպես որ հօդս ցնդեց այդտեղ եղածս շաբաթը:

Նրա քրոջ հսկողությունն ուժեղ էր, և ես այդպես էլ չգտա հարմար պահ նրան մոտենալու համար: Ես այդպես էլ մնացի նրան հետևող մոլագար, ինչպես որակել էր Միտչը:

Մտքերով ընկա, բայց շուտով էլ սթափվեցի՝ անապատի բեդուինների հրաշագործ դեղերը գովացող գիդի պատմությանը ականջ դնելով:

Հասանք օդանավակայան: Անապատի ամառային տաք քամին փոխվեց օդորակիչների անխնա փչող սառնամանիքով: Բոլոր ձևական ստուգման կետերն անցնելով հասանք duty free սրահին ու տեղավորվեցինք, ավելի ճիշտ՝ միայն ես, մյուսները քայլեցին դեպի խանութներ:

Ես մտքիս միջով հատ առ հատ անց կացրի օրվա անցքերը: Մինչդեռ փորձում էի փիլիսոփայական մոտեցում ցուցաբերել եղածին, ուշադրությունս գրավեց սրահի շրջանագծաձև

հայելին: Հանելով իմ Samsung Galaxy Note 10 Lite-ը սկսեցի հաշվումներ անել՝ որոշելու համար, թե հայելու ո՞ր կետին նայելով են երկու հոգի միմյանց տեսնում: Սակայն շուտով հոգնեցի ու թողեցի այդ զբաղմունքը:

Տեղավորվեցինք ինքնաթիռում: Տուրքիներն աշխատեցին ու այն թափավազք անելով պոկ եկավ գետնից՝ ետևում թողնելով Հուռգադան ու հյուրանոցը, անապատն ու ծովը: Բայց ինձ չէր հուզում դա, ինչի՞նչ էր պետք այդ ամենը: Այնտեղ մնացել էր ավելի կարևոր բան: Այնտեղ մնացել էր իմ սիրտը գրաված դիցուհին: Փոխարենը ինձ էր մնացել նրա հիշողությունը և սույն ասքը՝ ձոնած նրան, որ պիտի չթողներ նրա նվիրական հուշին անհետ կորչել, այլ ապրեցներ այն ու վկայեր այն մասին, որ ինձ երբևէ բախտ է վիճակվել վայելել նրա բարերար ներկայությունը, թեկուզ որ ես անմասն եմ մնացել նրա հետ խոսքի բռնվելու երկնային հաճույքից:

Մատները սահում էին դաշնամուրի ստեղնաշարի վրայով, կենդանություն տալով Յաննիի «Մի մարդու երազ» երաժշտության մեռած նոտաներին: Ուրախ էր այդ երազն ու խորհրդավոր, երկինքը պարզ էր այնտեղ, աստղերը պայծառ շողում էին, իսկ նա նույնքան շքեղ ու փառահեղ էր այդ երազում, որքան որ իրականում...